ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԺԳՆԱԺԱՄԸ ՎԱՎԵՐԱԳՐԵՐՈՒՄ

Լույս է տեսել «Վաւերագրեր Հայ Եկեղեցու պատմութեան» մատենաշարի յոթերորդ գիրքը՝ «Խրիմեան Հայրիկը և ցարական բռնապետութիւնը (1903-1907 թթ.)», կազմողի՝ Սանդրո Բեհբուդյանի «Հայ Եկեղեցին 20-րդ դարաշեմին» առաջաբանով:

Հայ Առաքելական Եկեղեցին իր հազարամյա ճանապարհին բազում դժվարություններ է հաղթահարել, անցել անասելի փորձություններով: Այդպիսի մի ճգնաժամ էր 1903 թ. եկեղեցական կալվածների առգրավումը Նիկոլայ Բ կայսեր հրամանով, որի անմիջական արդյունքն էր դպրոցների փակումը:

Ժողովածուն ամփոփում է բազում կոնդակներ, ուղերձներ, որոնք օգնում են առավել ստույգ պատկերացում կազմելու ժամանակի՛, ժամանակի մարդկա՛նց և առաջին հերթին՝ Խրիմյան Հայրիկի՛ ու նրա աջակիցների մասին, որ հոգևորականներ էին, ուսուցիչներ, գրողներ: Ժողովածուի մեջ տեղ գտած Մաղաքիա արքեպս. Օրմանյանի մի շարք գրությունները լույս են սփռում հայոց պահանջները հիմնավորելու, ձևակերպելու գործում, որն, անշուշտ, իր նպաստն է ունեցել վերջնական հաղթանակ ապահովելիս:

Հաղթանակը ձեռք բերվեց երկամյա պայքարի գնով: Հայոց հոգեմտավոր կյանքի կարևոր երկու հենասյուները՝ դպրոցն ու եկեղեցին, շուրջ երկու տարի կաթվածահար վիճակում մնալով, չէին կարող լիովին կատարել իրենց պարտականությունները: Ընդվզումները նույնպես տևեցին երկու տարի, մինչև որ, վերջապես, ցարը տեղի տվեց, վերադարձվեց Եկեղեցու ունեցվածքը, վերաբացվեցին դպրոցները: Իմաստուն ծերունու առաջնորդությամբ հաղթահարվեցին բոլոր խոչուխութերը, հրաշքը կատարվեց: Դա ազգային ոգու մեծ հաղթանակ էր, որի ոգեշնչողը Հայոց ինքնության պահապան հրեշտակն էր՝ Խրիմյան Հայրիկը: Եվ 1905 թ. հուլիսի 17-ի կոնդակով նա շնորհավորում էր համայն հայությանը. «Ողորմութիւն աստուածային տարածեցաւ այսօր ի վերայ քո յետ տառապանաց ամաց, եւ փառազարդեցաւ Եկեղեցին, եւ մխիթարեցար դու լիապէս, ժողովո՛ւրդ Հայոց» (էջ 340):

1905-ը միայն կալվածների վերադարձման և արդարության վերականգնման հանգամանքով չէ, որ առանձնացավ: Ծերունազարդ Կաթողիկոսի սիրտը խոցում էին Կովկասի քաղաքական զարգացումները, հայ-թաթարական ընդհարումները, որոնց նկատմամբ նույնպես դրսևորում էր իր վերաբերմունքը:

«Խրիմեան Հայրիկը և ցարական բռնապետութիւնը» ժողովածուն հարուստ նյութ է պարունակում Հայ Եկեղեցու, դպրոցի, ընդհանրապես հասարակական կյանքի բոլոր բնագավառների վերաբերյալ, ընդգրկելով 1903-1907 թվականները՝ հայրենասեր Կաթողիկոսի կյանքի վերջին հինգ տարիները: Նա ազգի սիրելին էր, Հայրիկը, որ, չնայած առաջացած տարիքին, ուներ ծրագրեր, փայփայած նպա-

տակներ, հետամուտ էր դրանց իրագործմանը, և սակայն, ի վերջո, «մարդիկ մտադրվում են, Աստվա՛ծ է կատարողը»: Անկատար իղձեր թողեց Մկրտիչ Խրիմյան Կաթողիկոսը, այդ թվում և ամենագլխավորը, ժողովրդական երգչի խոսքերով՝

Պիտ օծէիր Հայոց իշխան,
Խոստումըդ ո՞ւր մնաց, Հայրիկ:

Գրախոսվող ժողովածուն առատ նյութ է պարունակում դարասկզբի ազգային պատմության լուսաբանման համար և պատշաճ նվեր է երջանկահիշատակ Հայրապետի ծննդյան 180-ամյակին: «Հայրիկ, իր վախճանումէն իննսուն եւ ավելի տարիներ յետոյ,- գրել է Մեսրոպ արքեպս. Աշճյանը «Երկու խօսք»-ի մեջ,- աւելի քան կենդանի է: Մեր ժամանակակիցն է, մեր հայրն է, մեր առաջնորդն է, մեր ուսուցիչն է՝ հաւատքի եւ հայրենասիրութեան մեր կեանքին մէջ» (էջ 7):

ԱՆԻ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ